



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2024 թվականի թիվ 149-Ա

«ԲՐԵՆՂԻՂԵՐ» Հ/Ձ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի ապրիլի 22-ի նիստում, քննարկելով «Բրենդիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովը 2023 թվականի դեկտեմբերի 21-ի ««Բրենդիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 531-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 531-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-04772/23 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Ընկերությունը թիվ 531-Ա որոշումը ստացել է 2023 թվականի դեկտեմբերի 25-ին և 2024 թվականի հունվարի 4-ի գրությամբ ներկայացրել է վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում**):

Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 19-ի ««Բրենդիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-04772/23 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 109-Ա որոշմամբ Վարույթի ժամկետը երկարաձգվել է:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի մարտի 26-ի թիվ 003225 գրությամբ Ընկերությանն առաջարկվել է ներկայացնել գրավոր դիրքորոշում՝ Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) կողմից կազմված ««Բրենդիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-04772/23

վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**) առնչությամբ:

Ընկերությունը 2024 թվականի մարտի 29-ին ներկայացրել է Տեղեկանքի առնչությամբ գրավոր դիրքորոշում:

2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովի Պատասխանատու ստորաբաժանումը 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ՄՊՀ-011487 զեկուցագրով առաջարկել է Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Վարույթը հարուցվել է Ընկերության կողմից ««ՓԵՏԱԿԱ» փափուկ թարմ պանիր դասական, աղաջրում» անվանումով ապրանքը (այսուհետ նաև՝ **Ապրանք 1**) և ««ՓԵՏԱԿԱ» հալած պանիր» անվանումով ապրանքը (այսուհետ նաև՝ **Ապրանք 2**) ներմուծելու և իրացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքերով:

3. Ընկերության դիրքորոշումը.

Ընկերությունը Դիրքորոշմամբ հայտնել է, որ թիվ 531-Ա որոշմամբ թվարկված են անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածից մինչև 21-րդ հոդվածները, սակայն Ընկերության համար պարզ չէ, թե անբարեխիղճ մրցակցության դրսևորման ո՞ր տեսակն է վերագրվում Ընկերությանը, և ո՞րն է Ընկերության կողմից կատարված առերևույթ իրավախախտումը:

Ընկերությունը նշել է, որ երկար տարիներ զբաղվում է բրենդային ապրանքների ներմուծմամբ, ինչն իրականացնում է միայն բրենդային ապրանքների մատակարարների հետ կնքվող համապատասխան պայմանագրերի միջոցով:

Ապրանք 1-ն ու Ապրանք 2-ը ներմուծելու և իրացնելու հետ կապված ևս Ընկերությունն ունի կնքված պայմանագիր: Մասնավորապես, դեռևս մինչև Պատասխանատու ստորաբաժանման կողմից վկայակոչված համաձայնագրի ուժի մեջ մտնելը՝ 2012 թվականի նոյեմբերի 20-ին Ընկերության և ՌԴ-ում գործող «Հոխլանդ Ռուսսլանդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Հոխլանդ Ռուսսլանդ» ընկերություն**) միջև կնքվել է թիվ 1-1737 պայմանագիրը (այսուհետ նաև՝ **Պայմանագիր**), որտեղ Ընկերությունը հանդիսանում է գնորդը, իսկ «Հոխլանդ Ռուսսլանդ» ընկերությունը՝ վաճառող կազմակերպությունը:

Ընկերությունը, հղում տալով Պայմանագրի դրույթներին, հայտնել է հետևյալը.

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է

:

Պայմանագրի 1.2. կետի համաձայն՝ Գնորդը պարտավոր է,

Ըստ Ընկերության՝ վերը նշված Պայմանագրի կետերի բովանդակությունից պարզ է դառնում, որ Ընկերությունը հանդիսանում է «Հոխլանդ Ռուսսլանդ» ընկերության միակ ներկայացուցիչը ՀՀ-ում և միայն ինքն իրավունք ունի վաճառել Վաճառողի մատակարարած ապրանքները, այդ թվում նաև՝ Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը:

Ընկերությունը նշել է, որ մինչ օրս իրականացնում է «ՓԵՏԱԿԱ» ապրանքային նշանով ապրանքների ներմուծումը՝ համաձայն Պայմանագրի և առանց խախտելու այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Միաժամանակ, Ընկերությունը Պատասխանատու ստորաբաժանման ուշադրությունն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ այդ ապրանքների վրա նշված է նաև «Hochland» մայր կազմակերպության ապրանքային նշանը՝ «ՓԵՏԱԿԱ», որը 2009 թվականին ստացել է միջազգային գրանցում: Հետևաբար, «ՓԵՏԱԿԱ» ապրանքային նշանի իրավատերն է հանդիսանում «Hochland SE» ընկերությունը:

Ընկերությունը նշել է նաև, որ անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի պահանջով կարող է ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը հայտնել է, որ որևէ խախտում թույլ չի տվել:

Ընկերությունը Դիրքորոշմանը կից ներկայացրել է Պայմանագիրը, Պայմանագրի «Թիվ 15 լրացուցիչ համաձայնագիր»-ը և «ՓԵՏԱԿԱ» ապրանքային նշանի միջազգային գրանցման փաստը հավաստող քաղվածքը՝ կատարված «<https://www3.wipo.int/madrid/monitor/en/>» կայքից:

Ընկերությունը Տեղեկանքի առնչությամբ 2024 թվականի մարտի 29-ին ներկայացված դիրքորոշմամբ մեջբերել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը և նշել, որ տվյալ իրավանորմի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վարչական մարմնի վրա դրել է հստակ պարտավորություն՝ ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, ընդ որում՝ առանձնահատուկ ուշադրության է արժանի՝ վարույթի մասնակցի օգտին եղած հանգամանքների բացահայտման օրենսդրորեն ամրագրված պարտականությունը: Մինչդեռ, Ընկերությունը ստիպված է փաստել, որ Տեղեկանքի բովանդակությունից ստացվում է այնպիսի տպավորություն, որ Հանձնաժողովը ամբողջ վարույթի ընթացքում զբաղվել է ոչ թե գործի փաստական հանգամանքների լրիվ, բազմակողմանի և հատկապես օբյեկտիվ քննարկմամբ, այլ ձեռնարկել է բոլոր քայլերը՝ ի սկզբանե Ընկերությանը վերագրվող արարքը հիմնավորելու ուղղությամբ, քանի որ Ընկերության կողմից ներկայացված փաստարկների ու հիմնավորումների մի որոշ մասին անդրադարձ եղել է հպանցիկ, իսկ որոշ մասի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում ՀՀ օրենսդրության համապատասխան իրավակարգավորումներից:

Ընկերությունը հարկ է համարել նշել, որ Պատասխանատու ստորաբաժանման կողմից այն դիրքորոշումը, ըստ որի՝ «Hochland SE» ընկերության անվամբ գրանցված ապրանքային նշանը Ընկերության կողմից իրացվող Ապրանք 1-ի փաթեթավորման վրա չի օգտագործվում այն տեսքով, որով գրանցված է, չի բխում օրենսդրությունից:

Ընկերությունը, մեջբերելով «Ապրանքային նշանների մասին» օրենքի 57-րդ հոդվածը, հայտնել է, որ այդ նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ միջազգային գրանցում ստացած ապրանքային նշանների վրա տարածվում են նաև «Ապրանքային նշանների մասին» օրենքի դրույթները, եթե տվյալ ապրանքային նշանի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերությունը մեջբերել է «Ապրանքային նշանների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և նշել է, որ տվյալ նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը ապրանքային նշանի օգտագործում է դիտարկում նաև այն դեպքը, երբ ապրանքային նշանն օգտագործվում է ոչ այն տեսքով, որով գրանցված է մեկ այլ ապրանքային նշան՝ ոչ էական տարբերություններով, և այդ ապրանքային նշանի գետնումը ապրանքի վրա նույնպես համարվում է ապրանքային նշանի օգտագործում:

Բացի այդ, Ընկերությունը գտնում է, որ Պատասխանատու ստորաբաժանումը չի կարող իրեն իրավունք վերապահել կատարելու համեմատություններ երկու ապրանքային նշանների միջև, քանի որ օրենսդիրը ՀՀ մտավոր սեփականության գրասենյակին է (այսուհետ նաև՝ **Գրասենյակ**) վերապահել ապրանքային նշանների փորձաքննության, դրանց նման լինելու կամ դրանք շփոթելու օբյեկտիվ հնարավորությունները պարզելու և հաստատելու գործառույթը:

Ըստ Ընկերության՝ ապրանքային նշանները պետք է համեմատվեն այլ նշանների հետ, և համեմատություն անցկացնելիս անհրաժեշտ է ղեկավարվել ոչ միայն բառի համընկնմամբ, այլև այն դիտարկել պատկերների հետ միասին որպես մեկ ամբողջություն, որով էլ այն տպավորվում է սպառողների մոտ: Մինչդեռ, Պատասխանատու ստորաբաժանումը հանդես է եկել միջին սպառողի դերում, որի տեսանկյունից էլ գնահատել է Վարույթի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները. Պատասխանատու ստորաբաժանումը, որպես գրաֆիկական և իմաստային նմանությունները որակող մասնագետ, համեմատել և գնահատել է ապրանքային նշանների նմանությունը:

Ընկերությունը գտնում է, որ Պատասխանատու ստորաբաժանումը պարտավոր էր ձեռնարկել միջոցներ՝ փորձաքննություն նշանակելու և գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ ապրանքային նշանների շփոթության աստիճանի նման լինելը կամ չլինելը, որոշելու համար համապատասխան մասնագիտական գնահատական ձեռք բերելու ուղղությամբ, սակայն այդ միջոցները չձեռնարկելու՝ փորձաքննություն չնշանակելու արդյունքում խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջները:

Ընկերությունը, անդրադառնալով իր կողմից որպես «Фетакса» բառային ապրանքային նշանի իրավատեր տվյալ ապրանքային նշանի՝ ցանկացած ձևով և եղանակով ազատ օգտագործելու վերաբերյալ Պատասխանատու ստորաբաժանման հարցադրմանը, հայտնել է, որ նախ Ընկերությունը չի հանդիսանում «Фетакса» բառային ապրանքային նշանի իրավատեր և այդ հարցադրումը Ընկերությանը որպես իրավատեր սխալ է ուղղված:

Բացի այդ Ընկերությունը, մեջբերելով «Ապրանքային նշանների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, նշել է, որ «Фетакса» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում «Hochland SE» ընկերությունը և ոչ թե Ընկերությունը:

Անդրադառնալով Պատասխանատու ստորաբաժանման կողմից նշված այն դիրքորոշմանը, որի համաձայն՝ ապրանքային նշանը չպետք է օգտագործվի այնպես, որ տպավորություն ստեղծվի, թե այն առնչություն ունի պահպանվող ծագման տեղանվան՝ «Ֆետա»-ի հետ, ինչպես նաև այն, որ ապրանքային նշանի ԱԾՄԴ 29-րդ դասում ներառված կաթնամթերքի, ներառյալ՝ պանիր ապրանքատեսակների համար պահպանությունը Ընկերությանը չի կարող ընձեռել անսահմանափակ հնարավորություն՝ օգտագործելու ապրանքային նշանը նշված դասի ապրանքատեսակների համար ցանկացած ձևով և եղանակով՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

Ինչպես Պատասխանատու ստորաբաժանումն է նշել՝ Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև 2017 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրվել է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիրը (այսուհետ՝ **Համաձայնագիր**), որը վավերացվել է օրենքով և օրենքն ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 24-ին:

Պատասխանատու ստորաբաժանումն ընդունել է նաև այն փաստը, որ «Фетакса» ապրանքային նշանը պահպանվում է Հայաստանի Հանրապետությունում 2010 թվականի հունիսի 7-ից: Այսինքն, այդ ապրանքային նշանը ավելի վաղ է գրանցված Հայաստանի Հանրապետությունում, քան վավերացվել է Համաձայնագիրը:

Ընկերությունը մեջբերել է Համաձայնագրի 235-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, որի համաձայն՝ Կողմը մերժում է գրանցել կամ անվավեր է ճանաչում այն ապրանքային նշանը, որը համապատասխանում է 233-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված իրավիճակներից որևէ մեկին՝ կապված նման արտադրանքի պահպանվող աշխարհագրական նշման հետ՝ պայմանով, որ ապրանքային նշանը գրանցելու հայտը ներկայացվել է նշված տարածքում աշխարհագրական նշումը պահպանելու հայտը ներկայացնելու օրվանից հետո:

Վերոնշյալ նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ Կողմը կարող է անվավեր ճանաչել այն ապրանքային նշանի գրանցումը, որի գրանցման հայտը ներկայացվել է նշված տարածքում աշխարհագրական նշումը պահպանելու հայտը ներկայացնելուց հետո:

Համաձայնագրի 235-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ 231-րդ հոդվածում նշված աշխարհագրական նշումների համար պահպանման հայտ ներկայացնելու օրը սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրն է:

Համաձայնագրի 235-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, «Ֆետա» անվանումով աշխարհագրական նշման պահպանման հայտը ներկայացված է համարվում Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը, իսկ Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 1-ին:

Համաձայնագրի 235-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ չսահմանափակելով 232-րդ հոդվածի 2-րդ պարբերության (b) կետը՝ յուրաքանչյուր Կողմ X Հավելվածում նշված աշխարհագրական նշումները պահպանում է, եթե առկա է ավելի վաղ գրանցված ապրանքային նշան: Ավելի վաղ գրանցված ապրանքային նշան նշանակում է ապրանքային նշան, որի օգտագործումը համապատասխանում է 233-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված իրավիճակներից մեկին, և որի համար մի Կողմի տարածքում հայտ է ներկայացվել, որը գրանցվել կամ բարեխիղճ օգտագործմամբ հաստատվել է, եթե

այդպիսի հնարավորություն նախատեսված է Կողմի օրենսդրությամբ, մինչև մյուս կողմից՝ սույն համաձայնագրով աշխարհագրական նշումը պահպանելու հայտը ներկայացնելու օրը: Այսպիսի ապրանքային նշանը կարող է շարունակել օգտագործվել, և դրա գործողության ժամկետը կարող է երկարաձգվել՝ անկախ աշխարհագրական նշան պահպանությունից՝ պայմանով, որ Կողմերից որևէ մեկի՝ ապրանքային նշանների մասին օրենսդրությամբ առկա չեն ապրանքային նշանն անվավեր կամ չեղյալ ճանաչելու հիմքեր:

Նշված նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ «Фетакса» ապրանքային նշանը կարող է գործել ՀՀ-ում, եթե օրենսդրությամբ այն անվավեր կամ չեղյալ ճանաչելու հիմքեր առկա չեն, իսկ Պատասխանատու ստորաբաժանումն այդպիսի հիմքեր չի ներկայացրել:

Վերը նշված նորմերի և փաստական հանգամանքների վերլուծությունից պարզ է դառնում, որ Պատասխանատու ստորաբաժանումը չի ներկայացրել որևէ ապացույց «Фетакса» ապրանքային նշանի չեղյալ կամ անվավեր համարվելու վերաբերյալ, հետևաբար, առկա չէ որևէ հիմնավորում, ըստ որի՝ Ընկերության կողմից կատարվում է աշխարհագրական նշումների իրավական պահպանության հետ կապված պահանջների խախտում, որի արդյունքում Ընկերության կողմից դրսևորվում է իրավունքի չարաշահում:

Ընկերությունը նաև անդրադարձ է կատարել Ընկերության կողմից «Ֆետա» ծագման տեղանունով արտադրանքին համանման արտադրանքի համար «Фетакса» բառային ապրանքային նշանի օգտագործման արդյունքում հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առկայությանը:

Ընկերությունը հարկ է համարում նշել, որ Պատասխանատու ստորաբաժանումը չի կարող իրեն իրավունք վերապահել կատարելու համեմատություններ երկու ապրանքային նշանների միջև, քանի որ օրենսդիրը Գրասենյակին է վերապահել ապրանքային նշանների փորձաքննության, դրանց նման լինելու կամ դրանք շփոթելու օբյեկտիվ հնարավորությունները պարզելու և հաստատելու գործառույթը:

Ըստ Ընկերության՝ Պատասխանատու ստորաբաժանումը նույնպես չի ներկայացրել որևէ ապացույց՝ Ընկերության կողմից «Фетакса» բառային ապրանքային նշանի օգտագործմամբ պայմանավորված հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների մասին:

Ընկերությունը, անդրադառնալով նաև Պատասխանատու ստորաբաժանման կողմից առաջադրված այն հարցադրմանը, ըստ որի՝ արյդո՞ք Ընկերության կողմից Ապրանք 1-ը Պայմանագրի հիման վրա ներմուծելն ու իրացնելն Ընկերությանն ազատում է պատասխանատվությունից, հայտնել է հետևյալը.

Պատասխանատու ստորաբաժանման տրամաբանությամբ, որպեսզի պարզվի այն հարցը, թե արդյոք տնտեսավարող սուբյեկտը այլ տնտեսավարող սուբյեկտների հետ իրականացնում է բարեխիղճ մրցակցություն՝ պայմանագրի առկայությունը պարտադիր չէ: Սակայն Պատասխանատու ստորաբաժանումը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ձեռնարկատիրական գործունեությունը՝ ներառյալ մատակարարման գործարքները, իրականացվում են տնտեսավարող սուբյեկտների միջև կնքվող պայմանագրերի հիման վրա, որոնց բովանդակությունից պարզ է դառնում՝ արդյոք տնտեսավարող սուբյեկտներն իրենց ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում են բարեխիղճ մրցակցության պայմաններում, թե ոչ:

Միաժամանակ, Ընկերությունը հարկ է համարել նշել, որ Պատասխանատու ստորաբաժանումը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից՝ նշելով, որ Ընկերության կնքած պայմանագիրն անվավեր է, պայմանները հակասում են օրենքին և չեն կարող գործել, սակայն չի նշել, թե որ պայմաններն են հակասում օրենքին:

Ընկերությունը մեջբերել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածը և նշել, որ գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով, մինչդեռ Պատասխանատու ստորաբաժանումը ստանձնել է դատարանի գործառույթ և արդեն իսկ որոշել է, որ Պայմանագրի պայմանները հակասում են օրենքին և չեն կարող գործել, ու չի ներկայացվել որևէ ապացույց պայմանագրի առոչինչ լինելու վերաբերյալ կամ դատարանի որոշում՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/33899/02/13 քաղաքացիական գործով նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ գլխի 2-րդ պարագրաֆը կանոնակարգում է գործարքների անվավերությունը: Մասնավորապես, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածով որպես գործարքի անվավերության ընդհանուր հիմք նախատեսել է օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջներին չհամապատասխանելը, իսկ մյուս հոդվածներով որոշակի դեպքերի համար սահմանել է գործարքի անվավերության կոնկրետ հիմքերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրությամբ պայմանագիրն անվավեր ճանաչելու հիմքերը խիստ որոշակի են. պայմանագիրը ճանաչվում է անվավեր, եթե այն օրենքի և այլ իրավական ակտի պահանջներին չի համապատասխանում, կամ եթե առկա է անվավերության կոնկրետ հիմքերից որևէ մեկը: Նշվածից տարբերվող որևէ այլ հիմքով պայմանագիրն անվավեր ճանաչվել չի կարող:

Ընկերությունը գտնում է, որ հենց Պայմանագրի միջոցով է հնարավոր պարզել այն հարցը, թե արդյո՞ք Ընկերությունն իրավունք ունի ներմուծելու և իրացնելու «Фетакса» անվանմամբ ապրանքային նշանով ապրանքները:

Վերը նշված հիմքերի և իրավական հիմնավորումների համատեքստում Ընկերությունը հանգել է այն եզրակացության, որ «Ֆետա» աշխարհագրական նշանի և «Фетакса» ապրանքային նշանի միջև նմանության արդյունքում սպառողներին մոլորության մեջ գցելու վերաբերյալ եզրակացությունը կարող է տրամադրել միայն Գրասենյակը, որի հիման վրա Պատասխանատու ստորաբաժանումը կարող է վարչական վարույթ հարուցել և կարող է տուգանք նշանակել տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ:

Ընկերությունը ևս մեկ անգամ հավաստիացրել է, որ որևէ նպատակ չունի և չի ունեցել իր գործունեության արդյունքում մոլորեցնել սպառողներին, և որ կատարվել ու կատարվում են բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ՀՀ օրենսդրությանը համահունչ գործունեություն իրականացնելու ուղղությամբ:

4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.

1. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 226-Ա հրամանի հիման վրա «Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ «Պար-Արտ» ընկերություն) պատկանող՝ ք. Երևան, Մարգարյան 23/6 հասցեում գործող առևտրի օբյեկտում 2023

թվականի դեկտեմբերի 7-ին իրականացվել է դիտանցում, որի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 226 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 226 արձանագրություն**):

Թիվ 226 արձանագրության համաձայն՝ «Պար-Արտ» ընկերությանը պատկանող՝ ք. Երևան, Մարգարյան 23/6 հասցեում գործող առևտրի օբյեկտում վաճառքում, ի թիվս այլնի, առկա են Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը:

Թիվ 226 արձանագրության կից լուսանկարների համաձայն՝ Ընկերությունը ՀՀ-ում Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի պաշտոնական ներկայացուցիչն է:

2. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 227-Ա հրամանի հիման վրա «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Սիթի» ընկերություն**) պատկանող՝ ք. Երևան, Մաշտոցի 5 հասցեում գործող առևտրի օբյեկտում 2023 թվականի դեկտեմբերի 7-ին իրականացվել է դիտանցում, որի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 227 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 227 արձանագրություն**):

Թիվ 227 արձանագրության համաձայն՝ «Սիթի» ընկերությանը պատկանող՝ ք. Երևան, Մաշտոցի 5 հասցեում գործող առևտրի օբյեկտում վաճառքում, ի թիվս այլնի, առկա է Ապրանք 2-ը:

3. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 231-Ա հրամանի հիման վրա «Էվրիկա Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Էվրիկա Գրուպ» ընկերություն**) պատկանող՝ ք. Երևան, Մաշտոցի 20 հասցեում գործող առևտրի օբյեկտում 2023 թվականի դեկտեմբերի 7-ին իրականացվել է դիտանցում, որի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 231 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 231 արձանագրություն**):

Թիվ 231 արձանագրության համաձայն՝ «Էվրիկա Գրուպ» ընկերությանը պատկանող՝ ք. Երևան, Մաշտոցի 20 հասցեում գործող առևտրի օբյեկտում վաճառքում, ի թիվս այլնի, առկա է Ապրանք 2-ը:

4. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 011558 գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝ Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի ՀՀ-ում իրացման սկզբնաժամկետ(ներ)ի վերաբերյալ՝ նշելով ամսաթվերը (առանձնացված՝ ըստ յուրաքանչյուր ապրանքի):

Ընկերությունը 2023 թվականի դեկտեմբերի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ Ապրանք 1-ի՝ ՀՀ-ում իրացման սկզբնաժամկետը

, իսկ Ապրանք 2-ի իրացվելիության վերաբերյալ Ընկերությունը

ավելի վաղ տեղեկատվության չի տիրապետում, քանի որ ՀՀ օրենսդրությամբ պահանջ չի եղել տեղեկատվության պահպանման ժամկետների վերաբերյալ:

5. Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի մարտի 6-ի թիվ 103-Ա հրամանի հիման վրա «<https://parma.am>» կայքում 2024 թվականի մարտի 7-ին իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում 2024 թվականի մարտի 7-ին կազմվել է «Արտաքին

դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 103 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 103 արձանագրություն**):

Թիվ 103 արձանագրության համաձայն՝ «<https://parma.am>» կայքում «ՓԵՏԱԿԱ» անվանումով ապրանքը ներկայացված է 2 տեսակով.

1) «ՓԵՏԱԿԱ БЕЗ РАССОЛА» արտադրող՝ «Hochland Doichland», արտադրող երկիր՝ Ռուսաստան, հալած պանիր՝ Ֆետաքսա, յուղայնությունը չոր նյութում՝ 60%, բաղադրություն՝ պանիր աղաջրի մեջ, անյուղ կաթնային, կաթնային յուղի փոխարինիչ, չոր թան, աղ կայունացուցիչներ (E407, E410, E415), կիտրոնաթթու, ջուր, սպիտակուցներ գ/100գ-10, ճարպեր 100գ-25, ածխաջրեր 100գ-1.60, կիլոկալորիա 100գ-271.

2) «ՓԵՏԱԿԱ В РАССОЛЕ» արտադրող երկիր՝ Ռուսաստան, բրենդ՝ «Hochland», Ֆետաքսա պանիր՝ աղաջրի մեջ, յուղայնությունը՝ 45%, բաղադրությունը՝ պաստերիզացված նորմալացված կաթ, մանրէաբանական ծագման կաթի մակարդիչ ֆերմենտի պատրաստում, աղաջուր (խմելու ջուր, աղ), սպիտակուցներ գ/100գ:11, կիլոկալորիա 100գ:832, ճարպեր 100գ:16.5:

3) Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի մարտի 6-ի թիվ 103-Ա հրամանի հիման վրա «<https://www.sas.am>» կայքում 2024 թվականի մարտի 7-ին իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում 2024 թվականի մարտի 7-ին կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 104 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 104 արձանագրություն**):

Թիվ 104 արձանագրության համաձայն՝ «<https://www.sas.am>» կայքում «ՓԵՏԱԿԱ» անվանումով ապրանքը ներկայացված է որպես պանիր Ֆետակսա՝ հունական պանիր ոչխարի և այծի կաթից պատրաստված, արտադրման երկիր Ռուսաստան, ապրանքանիշ՝ «Hochland»:

6. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի մարտի 6-ի թիվ 2415 գրությամբ Հանձնաժողովը հայցել է Արդարադատության նախարարության աջակցությունը՝ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով Ապրանք 1-ի և/կամ Ապրանք 2-ի տարրաների վրա առկա օտարալեզու «ՓԵՏԱԿԱ, нежная консистенция, в рассоле, без консервантов, без рассола, держит форму» տեղեկատվության հայերեն թագմանությունն ապահովելու հարցում:

Արդարադատության նախարարությունը տրամադրել է հայցված տեղեկատվությունը, որի համաձայն՝ նշված օտարալեզու գրառումների համապատասխան հայերեն թարգմանությունը հետևյալն է. «ՖԵՏԱԿԱ, նուրբ կոնսիստենցիա, աղաջրով, առանց կոնսերվանտների, առանց աղաջրի, պահպանում է ձևը»:

7. Գրասենյակի «aipo.am» պաշտոնական կայքում, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված և «<https://www3.wipo.int/madrid/monitor/en/>» կայքից կատարված «ՓԵՏԱԿԱ» ապրանքային նշանի միջազգային գրանցման փաստը հավաստող քաղվածքի համաձայն՝ «Фетакса» բառային ապրանքային նշանը (այսուհետ նաև՝ **Ապրանքային նշան**) 2009 թվականի մարտի 27-ին գրանցվել է միջազգային ընթացակարգով՝ «Hochland SE» ընկերության անվամբ՝ ԱԾՄԴ 29-րդ դասում ներառված կաթնամթերք, ներառյալ՝ պանիր ապրանքատեսակների համար և, ի թիվս այլ երկրների, 2010 թվականի հունիսի 7-ից իրավական պահպանություն է ստացել նաև ՀՀ-ում:

8. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԳԳ-1092 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ-ին՝ խնդրելով տրամադրել Ընկերության կողմից 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների, ինչպես նաև նույն ժամանակահատվածում Ընկերության ընդհանուր հասույթի (ըստ ամիսների) վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը 2024 թվականի հունվարի 12-ին Հանձնաժողովին է տրամադրել հայցված տեղեկատվությունը, որի համաձայն՝ Ընկերության

:

Նույն տեղեկատվության համաձայն՝

:

5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.

1. Ընկերության կողմից ՌԴ-ից ներկրվում և ՀՀ-ում իրացվում են Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը (պատկերները տե՛ս ստորև).



Ապրանք 1



Ապրանք 2

2. Ապրանք 1-ը և Ապրանք 2-ն արտադրվում են ՌԴ-ում՝ «Հոխլանդ Ռուսլանդ» ընկերության կողմից:

3. «<https://www.sas.am>» կայքում «ФЕТАКА» անվանումով ապրանքը ներկայացված է որպես պանիր Ֆետակաս՝ հունական պանիր ոչխարի և այծի կաթից պատրաստված, արտադրման երկիր Ռուսաստան, ապրանքանիշ՝ «Hochland»:

4. Գրասենյակի «aipo.am» պաշտոնական կայքում, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված և «<https://www3.wipo.int/madrid/monitor/en/>» կայքից կատարված «ФЕТАКА» ապրանքային նշանի միջազգային գրանցման փաստը հավաստող քաղվածքի համաձայն՝ «ФЕТАКА» բառային ապրանքային նշանը 2009 թվականի մարտի 27-ին գրանցվել է միջազգային ընթացակարգով՝ «Hochland SE» ընկերության անվամբ՝ ԱԾՄԴ 29-րդ դասում ներառված կաթնամթերք, ներառյալ՝ պանիր ապրանքատեսակների համար և, ի թիվս այլ երկրների, 2010 թվականի հունիսի 7-ից իրավական պահպանություն է ստացել նաև ՀՀ-ում:

ՓԵՏԱԿՏԱ

5. Ընկերության կողմից ՀՀ-ում Ապրանք 1-ի իրացման սկզբնաժամկետ է համարվում , իսկ Ապրանք 2-ինը՝ :

6. ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության

:

6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.

1) Ընկերության կողմից իրավախախտումներ կատարված լինելու հարցի կապակցությամբ.

Վարույթը հարուցվել է Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը ներմուծելու և իրացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքերով:

Սույն գործի շրջանակներում Ընկերությունը ներկայացված դիրքորոշումներով հայտնել է հետևյալը.

1. Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը ներմուծվում և իրացվում են Պայմանագրի հիման վրա, որի բովանդակությունից պարզ է դառնում, որ Ընկերությունը հանդիսանում է «Հոխլանդ Ռուսլանդ» ընկերության միակ ներկայացուցիչը ՀՀ-ում և միայն ինքն իրավունք ունի վաճառել Վաճառողի մատակարարած ապրանքները, այդ թվում նաև՝ Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը:

2. Ընկերությունը մինչ օրս իրականացնում է «Փետակս» ապրանքային նշանով ապրանքների ներմուծումը՝ համաձայն Պայմանագրի և առանց խախտելու այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

3. Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի վրա նշված է նաև «Hochland» մայր կազմակերպության ապրանքային նշանը՝ «ՓԵՏԱԿՏԱ», որը 2009 թվականին ստացել է միջազգային գրանցում: Հետևաբար, «ՓԵՏԱԿՏԱ» ապրանքային նշանի իրավատերը «Hochland SE» ընկերությունն է:

4. «Ֆետա» աշխարհագրական նշանի և «Փետակս» ապրանքային նշանի միջև նմանության արդյունքում սպառողներին մոլորության մեջ գցելու վերաբերյալ եզրակացությունը կարող է տրամադրել միայն Գրասենյակը, որի հիման վրա Պատասխանատու ստորաբաժանումը կարող է վարչական վարույթ հարուցել և կարող է տուգանք նշանակել տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ:

5. Օրենսդիրը ապրանքային նշանի օգտագործում է դիտարկում նաև այն դեպքը, երբ ապրանքային նշանն օգտագործվում է ոչ այն տեսքով, որով գրանցված է մեկ այլ

ապրանքային նշան՝ ոչ էական տարբերություններով, և այդ ապրանքային նշանի զետեղումը ապրանքի վրա նույնպես համարվում է ապրանքային նշանի օգտագործում:

6. Պատասխանատու ստորաբաժանումն իրավունք չունի կատարել համեմատություններ երկու ապրանքային նշանների միջև, քանի որ օրենսդիրը Գրասենյակին է վերապահել ապրանքային նշանների փորձաքննության, դրանց նման լինելու կամ դրանք շփոթելու օբյեկտիվ հնարավորությունները պարզելու և հաստատելու գործառույթը: Պատասխանատու ստորաբաժանումը հանդես է եկել միջին սպառողի դերում, որի տեսանկյունից էլ գնահատել է Վարույթի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները. Պատասխանատու ստորաբաժանումը, որպես գրաֆիկական և իմաստային նմանությունները որակող մասնագետ, համեմատել և գնահատել է ապրանքային նշանների նմանությունը:

7. Պատասխանատու ստորաբաժանումը համապատասխան մասնագիտական գնահատական ձեռք բերելու ուղղությամբ պարտավոր էր ձեռնարկել միջոցներ՝ փորձաքննություն նշանակելու և գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ ապրանքային նշանների շփոթության աստիճանի նման լինելը կամ չլինելը, որոշելու համար:

8. Համաձայնագրի 235-րդ հոդվածի 1-ին պարբերության վերլուծությունից պարզ է դառնում, որ Կողմը կարող է անվավեր ճանաչել այն ապրանքային նշանի գրանցումը, որի գրանցման հայտը ներկայացվել է նշված տարածքում աշխարհագրական նշումը պահպանելու հայտը ներկայացնելուց հետո:

9. Համաձայնագրի 235-րդ հոդվածի 2-րդ պարբերության վերլուծությունից պարզ է դառնում, որ «Ֆետա» անվանումով աշխարհագրական նշման պահպանման հայտը ներկայացված է համարվում Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը, իսկ Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 1-ին:

10. Համաձայնագրի 235-րդ հոդվածի 4-րդ պարբերության վերլուծությունից պարզ է դառնում, որ «Фетакса» ապրանքային նշանը կարող է գործել ՀՀ-ում, եթե օրենսդրությամբ այն անվավեր կամ չեղյալ ճանաչելու հիմքեր առկա չեն, իսկ Պատասխանատու ստորաբաժանումն այդպիսի հիմքեր չի ներկայացրել:

11. Պատասխանատու ստորաբաժանումը չի ներկայացրել որևէ ապացույց «Фетакса» ապրանքային նշանի չեղյալ կամ անվավեր համարվելու վերաբերյալ, հետևաբար, առկա չէ որևէ հիմնավորում, ըստ որի՝ Ընկերության կողմից կատարվում է աշխարհագրական նշումների իրավական պահպանության հետ կապված պահանջների խախտում, որի արդյունքում Ընկերության կողմից դրսևորվում է իրավունքի չարաշահում:

12. Պատասխանատու ստորաբաժանումը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ձեռնարկատիրական գործունեությունը՝ ներառյալ մատակարարման գործարքները, իրականացվում են տնտեսավարող սուբյեկտների միջև կնքվող պայմանագրերի հիման վրա, որոնց բովանդակությունից պարզ է դառնում՝ արդյոք տնտեսավարող սուբյեկտներն իրենց ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում են բարեխիղճ մրցակցության պայմաններում, թե ոչ, և որ Պայմանագրի միջոցով է հնարավոր պարզել՝ արդյո՞ք Ընկերությունն իրավունք ունի ներմուծելու և իրացնելու «Фетакса» անվանմամբ ապրանքային նշանով ապրանքները:

13. Պատասխանատու ստորաբաժանումը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից՝ նշելով, որ Ընկերության կնքված պայմանագիրն անվավեր է, պայմանները հակասում են օրենքին և չեն կարող գործել, սակայն չի նշել, թե որ պայմաններն են հակասում օրենքին և չի ներկայացվել որևէ ապացույց պայմանագրի առոչինչ լինելու վերաբերյալ կամ դատարանի որոշում՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը, նախևառաջ, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումների պարզաբանմանը.

1. Ինչպե՞ս է դրսևորվում անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման օբյեկտիվ կողմը.

2. Ինչպե՞ս է դրսևորվում հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմը.

3. Ի՞նչ հեղուկներ է առաջացնում «Ֆեյրա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և պահանջներին համապատասխան արտադրված չլինելու պայմաններում «Ֆեյրա» կամ այդ բառը ներառող անվանմամբ համանման ապրանք իրացնելը.

4. Արդյո՞ք անձն ունի ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքների իրացման բացարձակ հայեցողություն.

5. Արդյո՞ք պայմանագրի հիման վրա գործելը տնտեսավարող սուբյեկտին ազատում է պատասխանավորությունից.

6. Արդյո՞ք Հանձնաժողովը որոշում կայացնելիս պարտավոր է անդրադառնալ տնտեսավարող սուբյեկտի բոլոր փաստարկներին:

Առաջին հարցադրման կապակցությամբ.

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է վարքագիծն անբարեխիղճ մրցակցություն որակելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունը կամ վարքագիծը, եթե այն.

- հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

- խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 16-24-րդ հոդվածներում նկարագրված իրավախախտումների հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:

Երկրորդ հարցադրման կապակցությամբ.

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցնելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալ կարգավորումների հիման վրա Հանձնաժողովը հարկ է համարում, նախևառաջ, արձանագրել, որ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցությունն իր բնույթով ունի ձևական կազմ, այսինքն՝ հետևանքի վրա հասնելը՝ սպառողի մոլորվելու փաստը, վարքագիծը Օրենքի 21-րդ հոդվածով որակելու պարտադիր և անհրաժեշտ պայման չէ: Ըստ այդմ, վարքագիծը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտում որակելու համար բավարար է միայն մոլորվելու հնարավորությունն ու հավանականությունը, այլ ոչ թե ինքնին մոլորվելու փաստը:

Մյուս կողմից, հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման ձևական բնույթը դրսևորվում է նրանում, որ արարքը կատարման փաստով համարվում է ավարտված: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ վայրում, այդ թվում՝ ինտերնետային կայքի տարբեր բաժիններում, այլ միջոցով կամ հետագայում անհրաժեշտ տեղեկությունները հայտնելը կամ այլ կերպ հասանելի դարձնելը իրավախախտումը չի վերացնում:

Միևնույն ժամանակ, կարևոր է արձանագրել, որ օրենսդիրը այս իրավախախտման օբյեկտիվ կողմի սպառնիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1) ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշման հնարավորության ստեղծմամբ, այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելու եղանակով.

2) սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, այդ թվում՝ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ նշելու եղանակով.

3) տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4) ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Ընդ որում, միևնույն վարքագիծը միաժամանակ կարող է համապատասխանել հասարակության մոլորեցման մեկից ավելի դրսևորումներին: Այսպես, օրինակ՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կարող է ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալ, այլ նաև ստեղծել թյուր տպավորության՝ ապակողմնորոշման հնարավորություն:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն առկա չէ, եթե կարող է վնաս հասցվել սպառողների կյանքին, առողջությանը, անվտանգությանը, հասարակական կամ պետական անվտանգությանը կամ շրջակա միջավայրին: Այլ կերպ ասած՝ եթե տնտեսավարող սուբյեկտի վարքագիծը վնասում է կամ կարող է վնասել բացառապես հիշատակված հանրային շահերը, ապա այն դուրս է Հանձնաժողովի իրավասության տիրույթից:

Երրորդ հարցադրման կապակցությամբ.

Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև 2017 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրվել է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիրը, որը վավերացվել է «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքով և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 24-ին:

Համաձայնագրի 231-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ ավարտելով առարկության ընթացակարգը և ուսումնասիրելով Եվրոպական միության՝ X Հավելվածում նշված այն աշխարհագրական նշումները, որոնք գրանցվել են Եվրոպական միության կողմից՝ IX Հավելվածի A մասում նշված օրենսդրության համաձայն, Հայաստանի

Հանրապետությունը պետք է պահպանի դրանք՝ սույն Համաձայնագրում սահմանված պահպանության մակարդակին համապատասխան:

Համաձայնագրի «Կողմերի օրենսդրությունը և աշխարհագրական նշման գրանցման, վերահսկողության և պահպանության տարրերը» IX Հավելվածի A մասի համաձայն՝ Եվրոպական միության օրենսդրությունը, ի թիվս այլնի, բաղկացած է «Գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի որակի համակարգերի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1151/2012 (ԵՄ) կանոնակարգից (այսուհետ նաև՝ **Կանոնակարգ**)՝ իր կիրարկման կանոններով, իսկ աշխարհագրական նշումներին վերաբերելի Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ ի թիվս այլնի, «Աշխարհագրական նշումների մասին» օրենքից և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1179-1183-րդ հոդվածներից:

Համաձայնագրի «Պահպանվող աշխարհագրական նշումների ցանկ» հավելված X-ում 231-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեջ նշված՝ Եվրոպական միության արտադրանքի աշխարհագրական նշումները ցանկում գինիներից, սպիրտային խմիչքներից և բուրավետացված գինիներից բացի գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի ցանկում տեղ է գտել նաև «**Ֆետա**» անվանումով պանիրը որպես պահպանվող ծագման տեղանուն:

Համաձայնագրի 233-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ X Հավելվածում նշված աշխարհագրական նշումները յուրաքանչյուր Կողմի կողմից պաշտպանվում են հետևյալից՝

a) պահպանվող անվանման՝ ցանկացած ուղղակի կամ ուղղակի առևտրային օգտագործումից՝ այնպիսի համեմատելի արտադրանքի համար, որը չի համապատասխանում պահպանվող անվանման ապրանքային հատկորոշումներին, կամ այնքանով, որքանով որ այդպիսի օգտագործումը վնասում է աշխարհագրական նշման համբավին,

b) ցանկացած չարաշահումից, նմանակումից կամ վերարտադրումից, նույնիսկ եթե արտադրանքի իրական ծագումը նշված է կամ եթե պահպանվող անվանումը թարգմանված է, սղագրված, տառադարձված կամ ուղեկցվում է այնպիսի արտահայտությամբ, ինչպիսին օրինակ՝ «ոճ», «տեսակ», «մեթոդ», «արտադրվում է», «նմանակում», «համ և հոտ», «նման» արտահայտությունն է, կամ նմանատիպ այլ արտահայտությամբ,

c) արտադրանքի ծագման վայրի, ծագման, բնույթի կամ էական հատկանիշների հետ կապված որևէ այլ կեղծ կամ մոլորության մեջ գցող նշումից, որը զետեղված է ներքին կամ արտաքին փաթեթավորման վրա, տվյալ արտադրանքին վերաբերող գովազդային նյութերում կամ փաստաթղթերում կամ բեռնարկղի մեջ արտադրանքի փաթեթավորման վրա, ինչը կարող է սխալ տպավորություն ստեղծել դրա ծագման առումով, և

d) որևէ այլ գործողությունից, որը կարող է սպառողին մոլորության մեջ գցել արտադրանքի իրական ծագման առումով:

Համաձայնագրի 233-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահպանվող աշխարհագրական նշումները Կողմերի տարածքներում ընդհանրական չեն դառնում:

Համաձայնագրի 236-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ իր պետական մարմինների կողմից իրականացվող պատշաճ վարչարարության միջոցով ապահովում է

Համաձայնագրի 233-ից 235-րդ հոդվածներին համապատասխան աշխարհագրական նշումների պահպանության հետ կապված պահանջների կատարումը: Յուրաքանչյուր Կողմ այդպիսի պահպանություն ապահովում է նաև շահագրգիռ անձի պահանջով:

Վերոգրյալի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինները պատշաճ վարչարարության միջոցով պարտավոր են ապահովել համապատասխան աշխարհագրական նշումների պահպանության հետ կապված պահանջների կատարումը:

Աշխարհագրական նշումների պահպանության հետ կապված պահանջների խախտում է հանդիսանում.

1. պահպանվող անվանման օգտագործումը այնպիսի համեմատելի արտադրանքի համար, որը չի համապատասխանում պահպանվող անվանման ապրանքային հատկորոշումներին.

2. պահպանվող անվանման նմանակումը, ցանկացած կերպով անվանման չարաշահումը կամ վերարտադրումը.

3. արտադրանքի ծագման վայրի, ծագման, բնույթի կամ էական հատկանիշների հետ կապված որևէ այլ կեղծ կամ մոլորության մեջ գցող նշումը.

4. ցանկացած գործողություն, որը սպառողին կարող է մոլորության մեջ գցել արտադրանքի իրական ծագման առումով:

Ստացվում է, որ պահպանության ենթակա աշխարհագրական նշումները և ծագման տեղանունները կամ դրանց նմանեցված բառերը, դրանց վերարտադրությունները, թարգմանությունները չեն կարող օգտագործվել այնպիսի արտադրանքի վրա, որը համանման է պահպանվող անվանումով ապրանքին:

Նման ապրանքների վրա այդպիսի անվանումների օգտագործումը հանգեցնելու է ապրանքի բնութագրերի վերաբերյալ թյուր տպավորության ստեղծման՝ ապակողմնորոշման հնարավորության ստեղծման, քանի որ սպառողները համանման արտադրանքի պարագայում ակնկալելու են ապրանքին ներկայացվող չափանիշներին համապատասխանող ապրանք: Այսինքն, համանման արտադրանքի համար ինչպես ինքնին աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների օգտագործումը, այնպես էլ վերջինիս նմանեցված կամ դրանք ներառող բառերի օգտագործումը պարունակում են անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Չորրորդ հարցադրման կապակցությամբ.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մտավոր սեփականության օբյեկտներ են մտավոր գործունեության արդյունքները և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցներ են ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները (սպասարկման նշանները), աշխարհագրական նշումները, ծագման տեղանունները և երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքային և սպասարկման նշանը (այսուհետ՝ ապրանքային նշան) այն նիշն է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայությունները այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար:

Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանի օգտագործում է համարվում՝

1) այդ ապրանքային նշանի զետեղումն ապրանքների կամ դրանց փաթեթավորման վրա, ինչպես նաև դրա օգտագործումը որպես այդ ապրանքների փաթեթավորում՝ եռաչափ ապրանքային նշանի դեպքում.

2) այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքների վաճառքի առաջարկը, դրանց վաճառքը կամ այդ նպատակով պահեստավորումը կամ այդ ապրանքային նշանով ծառայության մատուցումը կամ դրա առաջարկը.

3) այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքների ներմուծումը կամ արտահանումը.

4) այդ նիշի կիրառումը փաստաթղթերի վրա կամ գովազդի նպատակով.

5) այդ ապրանքային նշանի օգտագործումն ինտերնետային կամ հեռահաղորդակցության համաշխարհային համակարգչային այլ ցանցերում, մասնավորապես հասցեագրման ցանկացած միջոցներում, այդ թվում՝ դոմեն անվանումներում.

6) սույն կետի 1-4-րդ ենթակետերում նշված նպատակներով ապրանքային նշանի բազմացումը, պահեստավորումը կամ վաճառքը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մտավոր գործունեության արդյունքների կամ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների (այսուհետ՝ անհատականացման միջոցներ) նկատմամբ գույքային իրավունքների տիրապետողը մտավոր սեփականության այդ օբյեկտն իր հայեցողությամբ ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք ունի:

Այսպես, Սահմանադրական դատարանը 2019 թվականի ապրիլի 23-ի ՍԴՈ-1455 որոշմամբ արձանագրել է, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ամրագրման և դրա պաշտպանության իմաստը կայանում է նրանում, **որ սպառողներին հնարավորություն է տրվում տարբերակել շուկայում առկա ապրանքները՝** թույլ չտալով երրորդ անձանց ապօրինի օգտագործել գրանցված ապրանքային նշանը, ինչի արդյունքում պաշտպանվում են ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքներն ու շահերը: Այդ պատճառով օրենսդիրն արգելում է ոչ միայն արդեն իսկ գրանցված ապրանքային նշանի ապօրինի օգտագործման հնարավորությունը, այլ նաև այնպիսի ապրանքային նշանների օգտագործումը, որոնք նմանության պատճառով կարող են շփոթության մեջ գցել սպառողներին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ ՎԴ/4241/05/11 վարչական գործով արձանագրել է, որ ապրանքային նշանի իրավական պահպանությունը նպատակաուղղված է կանխելու անարդար մրցակցությունը, երաշխավորելու ներդրումների պաշտպանվածությունը, ինչպես նաև սպառողներին զերծ

պահելու կեղծ կամ ապակողմնորոշող գովազդից, անորակ ապրանքներից կամ ծառայություններից:

Այսպես, Հանձնաժողովն արձանագրում է, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ամրագրումը և դրա պաշտպանությունը, ի թիվս այլնի, հետապնդում են հետևյալ հիմնական նպատակները.

1. շուկայում առկա ապրանքների տարբերակման հնարավորություն սպառողների համար,

2. անարդար մրցակցության կանխում,

3. ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքների ու շահերի պաշտպանություն,

4. գրանցված ապրանքային նշանի՝ երրորդ անձանց կողմից ապօրինի օգտագործման կանխարգելում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում:

Մրցակցության սահմանափակման նպատակներով քաղաքացիական իրավունքներն օգտագործել, ինչպես նաև շուկայում գերիշխող դրությունը չարաշահել չի թույլատրվում:

Սահմանադրական դատարանի 2021 թ. փետրվարի 12-ի թիվ ՍԴՈ-1576 որոշմամբ անդրադարձ է կատարվել իրավունքի տեսության մեջ իրավունքի չարաշահման համընդհանուր բնորոշմանը. «Իրավունքի տեսության մեջ իրավունքի չարաշահումն արձանագրվում է, երբ առկա է, որպես կանոն, հետևյալ պայմանների համակցությունը.

1. անձը պետք է ունենա համապատասխան իրավունքը,

2. իրավունքի չարաշահումը տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքի իրացման ընթացքում, անձն առերևույթ գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան,

3. անձի՝ առերևույթ իրավաչափ գործողությունները հանգեցնում են պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերի խախտմանը, իսկ անձն ձգտում է հասնել իր համար ցանկալի արդյունքին կամ նպատակին,

4. իրավունքի չարաշահումը կամային գործընթաց է, այսինքն՝ անձը գիտակցում է, որ ինքն իր սուբյեկտիվ իրավունքը չարաշահում է, հետևաբար՝ պետք է կանխատեսի, որ կարող է վնաս պատճառել պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերին»:

Այսպիսով, ցանկացած դեպքում, երբ անձը գիտակցում է, որ իր առերևույթ իրավաչափ գործողությունները հանգեցնում են այլ անձանց օրինական շահերի խախտման, նրա գործողությունները դիտարկվում են որպես իրավունքի չարաշահում:

Ավելին, Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ ՎԴ/4241/05/11 որոշման համաձայն՝ ապրանքային նշանի իրավատերը պարտավոր է բարեխղճորեն օգտվել ապրանքային նշանի նկատմամբ իր բացառիկ իրավունքից, որը նախևառաջ ենթադրում է գրանցված ապրանքային նշանի՝ օրենքով սահմանված կարգով օգտագործում: Գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից դրա՝ օրենքով սահմանված կարգով օգտագործումը հանդիսանում է այդ ապրանքային նշանի

նկատմամբ ունեցած իրավունքների պահպանման պայման, որը կոչված է ապահովելու ապրանքների և ծառայությունների բնականոն քաղաքացիական շրջանառությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքներն իրացնելիս անձը պետք է գործի բարեխղճորեն: Ընդ որում, հակառակ գործելակերպը ուղղակիորեն առնչվում է իրավունքի չարաշահման ինստիտուտին, որը, ի թիվս այլնի, կարող է ունենալ հետևյալ դրսևորումները.

1. մրցակցության սահմանափակման նպատակներով ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքների իրացում.

2. ապրանքային նշանը դրա նկատմամբ իրավունքի ամրագրման և դրա պաշտպանության նպատակին ոչ համապատասխան օգտագործում.

3. այնպիսի ապրանքային նշանի օգտագործում, որը կարող է սպառողի մոտ հանգեցնել ապրանքի որակի կամ այլ բնութագրերի վերաբերյալ թյուր տպավորության ստեղծման՝ ապակողմնորոշման:

Ընդ որում, վերջին գաղափարը ունի նաև հստակ օրենսդրական կարգավորում: Այսպես, «Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1.1-ի մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի արտադրություն և (կամ) շրջանառություն իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և (կամ) շրջանառվող սննդամթերքի և (կամ) սննդամթերքի մատուցման ծառայությունների անհատականացման միջոցներում արգելվում է օգտագործել «օրգանական», «էկոլոգիական», «բիոլոգիական» բառերը կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, բացառությամբ զուտ օրգանական գյուղատնտեսական արտադրանք արտադրող և (կամ) շրջանառող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և (կամ) շրջանառվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և (կամ) օրգանական գյուղատնտեսական արտադրանքի ծառայությունների մատուցման անհատականացման միջոցների:

Հինգերորդ հարցադրման կապակցությամբ.

Օրենքի 95-րդ հոդվածի համաձայն՝

1. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե վարույթ հարուցելու օրվա դրությամբ իրավախախտման կատարման օրվանից անցել է հինգ տարի:

2. Հանձնաժողովը կարող է անձին ազատել պատասխանատվությունից, եթե նրա վարքագիծը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ որևէ անձի կամ պետությանն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել:

Այսպես, Օրենքով սպառիչ թվարկված են անձին պատասխանատվությունից ազատելու հիմքերը և դրանք չեն ներառում պայմանագրային հարաբերությունների հիման վրա գործելու դեպքերը:

Օրենքը, ի թիվս այլ հարցերի, սահմանել է Օրենքի նպատակը և դրա կարգավորման առարկան: Այսպես, Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *Օրենքի նպատակն է պաշտպանել*

և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, **ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր**, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և **սպառողների շահերի պաշտպանությանը** Հայաստանի Հանրապետությունում:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք արձանագրել, որ Օրենքի իրավակարգավորումները նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցության վրա հիմնված շուկայական տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովմանը և **տարածվում են տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը**:

Ողջ վերոնշյալը թույլ է տալիս արձանագրել, որ պետության՝ Սահմանադրությամբ ամրագրված նպատակներից է սպառողների շահերի պաշտպանությունը, ծառայությունների որակի նկատմամբ վերահսկողությունը և այդ նպատակների իրագործման նպատակով է նաև, որ Օրենքի հիման վրա Հանձնաժողովն իրականացնում է տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների բացահայտում և տնտեսական գործունեության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը հանգեցնող գործողությունների կանխարգելում:

Ի վերջո, սպառողներին մոլորեցնելու եղանակով անբարեխիղճ մրցակցության արգելքն արդեն իսկ նախատեսված է Օրենքով, և դժվար է պատկերացնել իրավիճակ, երբ նշված իրավախախտման հիմքում ընկած չլինի որևէ քաղաքացիաիրավական հարաբերություն:

Տնտեսավարող սուբյեկտների միջև պայմանագրային հարաբերությունների առկայությունը որևէ կերպ չի բացառում իրավախախտում կատարելու համար պետության ներգործության և հանրային վտանգավորություն ունեցող արարքի՝ իրավախախտման համար պատասխանատվություն հնարավորությունը, քանի որ Օրենքով նախատեսված իրավախախտումների գերակշիռ մեծամասնության դեպքում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են հենց տնտեսավարող սուբյեկտների կողմից պայմանագրային հարաբերությունների շրջանակում դրսևորվող գործողությունները՝ դրանք դիտարկելով գերիշխող դիրքի չարաշահման, բանակցային ուժեղ դիրքի չարաշահման, անբարեխիղճ մրցակցության և այլ իրավախախտումների համատեքստում:

Վերոգրյալը թույլ է տալիս պնդել, որ հարաբերությունների քաղաքացիաիրավական բնույթը չի բացառում դրանց նկատմամբ հանրային իրավական վերահսկողությունը, իսկ իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը չի կարող կախվածության մեջ դրվել պայմանագրային հարաբերությունների առկայությունից կամ բացակայությունից:

Վեցերորդ հարցադրման կապակցությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում.

բ) վարչական ակտը պետք է կազմված լինի սահմանված ձևի և նմուշի թղթի վրա:

2. Վարչական ակտը, որպես կանոն, պետք է տեղեկություններ պարունակի նաև այն ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ, որոնք կատարվել են ակտի ընդունման կապակցությամբ: Ծախսերը վերադարձնելու հետ կապված ակտ ընդունելու դեպքում պետք է նշվեն վերադարձման ենթակա գումարը և վերադարձման կարգն ու պայմանները:

3. Վարչական ակտը կարող է ունենալ ներդիրներ, հավելվածներ կամ լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնց գործողությունը չի կարող գերազանցել վարչական ակտի գործողության ժամկետը: Ներդիրները, հավելվածները և լրացուցիչ այլ փաստաթղթերը ինքնուրույն վարչական ակտեր չեն, դրանք վարչական ակտի բաղկացուցիչ մասն են և գործում են այնքանով, որքանով գործում է բուն վարչական ակտը:

4. Վարչական ակտը պետք է պարունակի՝

ա) վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը.

բ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

գ) ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.

դ) ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս).

ե) ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

զ) ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).

է) ակտի գործողության ժամկետը, եթե ակտն ընդունվում է որոշակի ժամկետով.

ը) ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

թ) ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը, նրա ստորագրությունը.

ժ) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը:

5. Միանման հարց կարգավորող վարչական ակտը կարող է ունենալ միասնական նմուշի ձև (ձևաթուղթ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

2. Հիմնավորում չի պահանջվում, եթե՝

ա) վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները.

բ) ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից.

գ) վարչական մարմինը նույնանման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրատարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա:

3. Արգելվում է վարչական մարմնի ընդունած վարչական ակտերի հիմնավորումն այն փաստարկներով, որոնք չեն առնչվում տվյալ մարմնի իրավասությանը:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի պատճառաբանվածությանը՝ որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս, արձանագրել է, որ դատարանները պարտավորվում են իրենց որոշումները պատճառաբանել, սակայն դա չի կարող ընկալվել որպես յուրաքանչյուր փաստարկի մասով մանրակրկիտ պատասխան ներկայացնելու պահանջ: Պատճառաբանելու պարտականության ծավալը կարող է տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից և կարող է որոշվել միայն գործի հանգամանքների լույսի ներքո. անհրաժեշտ է հաշվի առնել, *inter alia*, այն բազմազան գրավոր փաստարկները, որոնք դատարաններում կարող է ներկայացնել դատավարության մասնակիցը, (...) (տե՛ս, *Van de Hurk v. the Netherlands* գործով Եվրոպական դատարանի 19.04.1994 թվականի վճիռը, կետ 61, *Hiro Balani v. Spain* գործով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, կետ 27):

Նույնաբովանդակ դիրքորոշում արտահայտել է նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ արդար դատաքննության իրավունքը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր փաստարկներին (տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0531/05/16 վարչական գործով 2021 թվականի հոկտեմբերի 29-ի և թիվ ՎԴ5/0173/05/18 վարչական գործով 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշումները):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ վարչական ակտ կայացնելիս տնտեսավարող սուբյեկտի ոչ էական փաստարկներին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է: Ըստ այդմ, սույն որոշման շրջանակում առանձին քննարկման առարկա չդարձված Վարույթով պատասխանողի փաստարկները Հանձնաժողովի կողմից գնահատվել են այդ տրամաբանությամբ:

Վերոշարադրյալ դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վարույթը հարուցվել է Ընկերության կողմից Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը ներմուծելու և իրացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքերով:

Սույն գործի փաստերի համաձայն՝

1. Ընկերության կողմից ՌԴ-ից ներկրվում և ՀՀ-ում իրացվում են Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը.

2. Ապրանք 1-ը և Ապրանք 2-ն արտադրվում են ՌԴ-ում՝ «Հոխլանդ Ռուսլանդ» ընկերության կողմից.

4. Գրասենյակի «aipo.am» պաշտոնական կայքում, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված և «<https://www3.wipo.int/madrid/monitor/en/>» կայքից կատարված «ՓԵՏԱԿԱ» ապրանքային նշանի միջազգային գրանցման փաստը հավաստող քաղվածքի համաձայն՝ «ՓԵՏԱԿԱ» բառային ապրանքային նշանը 2009 թվականի մարտի 27-ին գրանցվել է միջազգային ընթացակարգով՝ «Hochland SE» ընկերության անվամբ՝ ԱԾՄԴ 29-րդ դասում ներառված կաթնամթերք, ներառյալ՝ պանիր ապրանքատեսակների համար և, ի թիվս այլ երկրների, 2010 թվականի հունիսի 7-ից իրավական պահպանություն է ստացել նաև ՀՀ-ում.

5. Ընկերության կողմից ՀՀ-ում Ապրանք 1-ի իրացման սկզբնաժամկետ է համարվում, , իսկ Ապրանք 2-ինը՝ :

Նշվածի կապակցությամբ էական է պարզաբանել հետևյալ հարցադրումները.

1) Արդյո՞ք «Ֆետա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և պահանջներին համապատասխան արտադրված չլինելու պայմաններում Ընկերության կողմից «Ֆետա» կամ այդ բառը ներառող անվանմամբ համանման ապրանքը «Ֆետա» ծագման տեղանվան հետ ասոցացվող ձևով իրացնելը կարող է պարունակել անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ.

2) Արդյո՞ք տվյալ դեպքում առկա է իրավունքի չարաշահում:

Առաջին հարցադրման կապակցությամբ.

Սույն դեպքում «Фетакса» բառային ապրանքային նշանը գրանցված է կաթնամթերային, ներառյալ՝ պանիր ապրանքատեսակների համար:

«Фетакса» բառի առաջին չորս տառերի կազմությամբ առկա է պահպանվող ծագման տեղանուն՝ «Ֆետա»:

«Фетакса» բառն ամբողջությամբ ներառում է «Ֆետա» բառը և վերջինից տարբերվում է միայն վերջին երեք ավել տառերով: «Фетакса» բառն առանձին իմաստ չունի և հետևաբար սպառողի կողմից ինքնուրույն չի ընկալվում:

Այսպիսով, Ընկերության կողմից ինչպես արդեն իսկ նշվել է «Фетакса» արտահայտությունն օգտագործվում է պանիր արտադրատեսակի վրա, որի փաթեթվածքի վրա առկա են ծովի, սպիտակ տներով բնակավայրի, կտրատված սպիտակ պանրի պատկերներ:

Նման պայմաններում ստացվում է, որ Ընկերությունը իրացնում է.

1. «Ֆետա» ծագման տեղանունով արտադրանքին համանման արտադրանք, որի վրա առկա են նաև այդ արտադրատեսակին նմանեցված կտրատված սպիտակ պանրի պատկերներ:

2. Արտադրանքը ստեղծում է Հունաստանում արտադրված լինելու տպավորություն, քանի որ արտադրանքի փաթեթավորումը պարունակում է ծովի, սպիտակ տներով բնակավայրի պատկերներ:

3. Արտադրանքի վրա առկա է «Φετα» անվանումը, որն ամբողջությամբ ներառում է «Ֆետա» ծագման տեղանունը և երկու բառերի միջև տարբերությունները գրեթե անէական են, միաժամանակ անվանումը տպագրված է հունական ոճավորմամբ:

Այսինքն, Հանձնաժողովի գնահատմամբ, «Φετα» անվանման ոճավորված օգտագործումը Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի ներկա փաթեթավորման տեսքում ներառված պատկերների հետ միասին, դրանց ընդհանուր առմամբ ներկայացման ձևը կարող են ստեղծել այնպիսի տպավորություն, որ տվյալ ապրանքները ասոցացվեն «Ֆետա» պահպանվող ծագման տեղանվան հետ և, հետևաբար, հանգեցնեն այնպիսի տպավորության, ըստ որի՝ դրանք արտադրվել, վերամշակվել և պատրաստվել են այն կոնկրետ տարածքներում, երկրում կամ որոշակի տեղանքում, որտեղ արտադրվում, վերամշակվում և պատրաստվում են «Ֆետա» պահպանվող ծագման տեղանվամբ պանիրները:

Այսպիսով՝ Ընկերության կողմից Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը «Φετα» անվանումով և «Ֆետա» ծագման տեղանվան հետ ասոցացվող փաթեթավորմամբ իրացնելն այն դեպքում, երբ դրանք արտադրված չեն «Ֆետա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և պահանջներին համապատասխան, պարունակում է անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Երկրորդ հարցադրման կապակցությամբ.

«Φετα» ապրանքային նշանն ամբողջությամբ ներառում է «Ֆետա» բառը և վերջինից տարբերվում է միայն վերջին երեք ավել տառերով: Ապրանքային նշանն օգտագործվում է Ֆետա» ծագման տեղանունով արտադրանքին համանման արտադրանքի համար, ունի հունական ոճավորում:

Այսպիսով, Ապրանքային նշանն օգտագործվում է այնպես, որ ընկալվում է ոչ թե որպես ապրանքային նշան, այլ որպես ծագման տեղանուն՝ իր հերթին սպառողների մոտ տպավորություն ստեղծելով, որ Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը արտադրված են «Ֆետա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և համապատասխանում են դրա պահանջներին: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում ապրանքային նշանի օգտագործումը միտված է ոչ թե Ընկերության կողմից իրացվող ապրանքները այլ արտադրողների կամ ներմուծողների ապրանքներից տարբերակելուն՝ անհատականացնելուն, այլ իր բովանդակությամբ և ներկայացման ձևով հանգեցնում է դրանց բովանդակության վերաբերյալ թյուր տպավորության ստեղծման հնարավորության: Ըստ այդմ էլ տվյալ դեպքում առկա է Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների իրացման չարաշահման դրսևորում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության կողմից Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը «Φετα» անվանումով և «Ֆետա» ծագման

տեղանվան հետ ասոցացվող փաթեթավորմամբ իրացնելն այն դեպքում, երբ դրանք արտադրված չեն «Ֆետա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և պահանջներին համապատասխան, պարունակում է անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$S = P + P \times (\sigma - U)$$

Որտեղ՝

S-տուգանքի չափն է,

P-տուգանքի բազային գումարը,

Ծ-ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը,

Մ-մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը:

Բազային գումարի հաշվարկը.

Մեթոդաբանության 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող մեթոդը վերաբերում է անբարեխիղճ մրցակցությանը, բացառությամբ ակցիաների:

Մեթոդաբանության 21-րդ կետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող տուգանքի բազային գումարը հաշվարկվում է $P = < \times 2.5\% \times \sigma$ բանաձևով, որտեղ՝

P-ն տուգանքի բազային գումարն է,

<-ն ապրանքի իրացումից ստացված հասույթն է կամ ընդհանուր հասույթի կեսն է,

σ-ն իրավախախտման տևողության գործակիցն է:

Ապրանքի իրացումից ստացված հասույթ.

Մեթոդաբանության 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ապրանք է համարվում տվյալ իրավախախտման առնչությամբ Հանձնաժողովի կողմից հատկորոշված ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանում ներգրավված ապրանքը, իսկ ապրանքային շուկա հատկորոշված չլինելու դեպքում՝ ապրանքը, որն իրավախախտման հետևանքով ստացել է կամ կարող էր ստանալ իրացման համար առավելություն, իսկ դա որոշելու անհնարինության դեպքում՝ Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով նախատեսված դասակարգչի, ըստ հաջորդականության, ենթակարգում, ենթակարգում առանձնացված չլինելու դեպքում՝ կարգում, կարգում առանձնացված չլինելու դեպքում՝ դասում և դասում առանձնացված չլինելու դեպքում՝ խմբում ներառված ապրանքը:

Մեթոդաբանության 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ համապատասխան ժամանակահատվածը Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին դադարեցված իրավախախտումների դեպքում՝ իրավախախտման դադարեցմանը նախորդող տարին է: Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում՝ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարին է: Իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարում 12 ամբողջական ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրավախախտման դադարեցման կամ վարույթ

հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող, բայց ոչ ավել քան 12 ամբողջական ամսվա գործունեության ժամանակահատվածն է:

Մեթոդաբանության 22-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք ընդունվող հասույթի ընտրությունն իրականացվում է Մեթոդաբանության 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգով:

Մեթոդաբանության 15-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ապրանքի իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 16-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար ապրանքի իրացումից ստացված հասույթի փոխարեն հիմք է ընդունվում ընդհանուր հասույթը, եթե.

1) իրավախախտումը չի առնչվում որևէ ապրանքի հետ.

2) կիրառվող բազային գումարը հաշվարկվում է անձանց խմբում ընդգրկված այն տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ, որը չունի ապրանքի իրացումից ստացված հասույթ.

3) պետական մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ գնահատել ապրանքի իրացումից ստացված հասույթը և տնտեսավարող սուբյեկտը չի ներկայացրել ապացույցներ ընդհանուր հասույթի, ապրանքի իրացումից ստացված հասույթի և դրանց գոյացման հիմքերի վերաբերյալ:

Մեթոդաբանության 17-րդ կետի համաձայն՝ եթե ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի վերաբերյալ պետական մարմնից ստացված տեղեկատվությունը ներառում է համապատասխան ժամանակահատվածը չընդգրկող ամիսներ և առանձնացված չեն համապատասխան ժամանակահատվածում ներառված ամիսներին ստացված հասույթները, ապա տուգանքի բազային գումարի հաշվարկման համար համապատասխան ժամանակահատվածը չընդգրկող ամիսների հասույթը նվազեցվում է: Նվազեցվող հասույթի գումարը յուրաքանչյուր ամսվա համար հավասար է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հասույթի գումարի և այդ ժամանակաշրջանում ներառված ամիսների հարաբերակցությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից Ապրանք 1-ը և Ապրանք 2-ն իրացվել են համապատասխանաբար , իսկ Վարույթը հարուցվել է 2023 թվականի դեկտեմբերի 21-ին, Հանձնաժողովը Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի մասով որպես իրավախախտումների մեջ ներգրավված ապրանքներ դիտարկում է Ընկերության

ՀՀ դրամ և

ՀՀ դրամ:

Իրավախախտման տևողությունը.

Մեթոդաբանության 23-րդ կետի համաձայն՝ եթե դիտարկվող ժամանակահատվածը չի գերազանցում 12 ամբողջական ամիսը, ապա իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է 1, իսկ եթե դիտարկվող ժամանակահատվածը 12 ամբողջական ամսից ավելի է՝ իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է 1.5:

Ընկերությունը Վարույթի շրջանակներում հայտնել է, որ Ապրանք 1-ը սկսել է իրացնել , իսկ Ապրանք 2-ը :

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը, որպես Վարույթով իրավախախտումների սկզբնաժամկետներ, դիտարկում է Ընկերության կողմից Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի իրացման սկզբնաժամկետների ամսաթվերը՝ Ապրանք 1-ի մասով , իսկ Ապրանք 2-ի մասով՝ : Հետևաբար, Ընկերության կողմից իրավախախտումներ կատարելու ժամանակահատվածը , հետևաբար սույն գործով իրավախախտումների տևողության գործակիցը է:

2.1) Ապրանք 1-ի մասով.

Վերոնշյալից բխում է, որ Ապրանք 1-ի մասով տուգանքի բազային գումարը կազմում է ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

$$P = C \times T \times D =$$

ՀՀ դրամ:

Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.

Մեթոդաբանության 31-32-րդ կետերով և 39-40-րդ կետերով սահմանված են երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

:

Տուգանքի հաշվարկը.

Վերոշարադրյալից հետևում է, որ Ապրանք 1-ի մասով տուգանքի չափը կազմում է 204 479 ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

$$S = P + P \times (D - U) =$$

= 204 479 ՀՀ դրամ:

Մեթոդաբանության 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը տալիս է նախազգուշացում, եթե իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը հաշվարկման արդյունքում հավասար է կամ չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ապրանք 1-ի մասով հաշվարկված տուգանքի գումարը՝ 204 479 ՀՀ դրամը, փոքր է 250 000 ՀՀ դրամից, Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության նկատմամբ Ապրանք 1-ի մասով կիրառելի է պատասխանատվության միջոցի նախազգուշացում տեսակը:

2.2) Ապրանք 2-ի մասով.

Վերոնշյալից բխում է, որ Ապրանք 2-ի մասով տուգանքի բազային գումարը կազմում է ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

$$P = C \times T \times D =$$

=

ՀՀ դրամ:

Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.

Մեթոդաբանության 31-32-րդ կետերով և 39-40-րդ կետերով սահմանված են երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը ծանրացնող և

մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

:

Տուգանքի հաշվարկը.

Վերոշարադրյալից հետևում է, որ Ապրանք 2-ի մասով տուգանքի չափը կազմում է 432 153 ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

$$S = P + P \times (D - U) = 432\,153 \text{ ՀՀ դրամ:}$$

Մեթոդաբանության 10-րդ կետի համաձայն՝ տուգանքի վերջնական գումարը կլորացվում է դեպի ներքև 1000 ՀՀ դրամի ճշգրտությամբ, հետևաբար, Ընկերության նկատմամբ նշանակվող տուգանքի չափը Ապրանք 2-ի մասով կկազմի 432 000 (չորս հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ:

3) Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ.

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Տվյալ պարագայում Ընկերության կողմից Ապրանք 1-ը և Ապրանք 2-ը իրացվում են «Фетакса» անվանումով և «Ֆետա» ծագման տեղանվան հետ ասոցացվող փաթեթավորմամբ այն դեպքում, երբ դրանք արտադրված չեն «Ֆետա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և պահանջներին համապատասխան, որպիսի պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերությանն անհրաժեշտ է տալ հանձնարարություն՝ մեկ ամսվա ընթացքում շտկել օրենքի խախտումը՝ դադարեցնել Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի իրացումն այն տեսքով, որը կարող է տպավորություն ստեղծել, թե դրանք կապված են «Ֆետա» պահպանվող ծագման տեղանվան հետ:

7. Եզրափակիչ մաս.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բրենդլիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ««ФЕТАКСА» փափուկ թարմ պանիր դասական, աղաջրում» անվանումով և «Ֆետա»

ծագման տեղանվան հետ ասոցացվող փաթեթավորմամբ ապրանքն իրացնելն այն դեպքում, երբ այն արտադրված չէ «Ֆետա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և պահանջներին համապատասխան, որակել որպես անբարեխիղճ մրցակցություն, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն:

2. Սույն որոշման 1-ին կետում արձանագրված խախտման համար «Բրենդիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ նախազգուշացում:

3. «Բրենդիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնարարել.

1) մեկամսյա ժամկետում շտկել սույն որոշման 1-ին կետում արձանագրված խախտումը՝ դադարեցնել ««ՓԵՏԱԿԱ» փափուկ թարմ պանիր դասական, աղաջրում» անվանումով և «Ֆետա» ծագման տեղանվան հետ ասոցացվող փաթեթավորմամբ ապրանքի իրացումը.

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված հանձնարարությունը կատարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցներ:

4. «Բրենդիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ««ՓԵՏԱԿԱ» հալած պանիր» անվանումով և «Ֆետա» ծագման տեղանվան հետ ասոցացվող փաթեթավորմամբ ապրանքն իրացնելն այն դեպքում, երբ այն արտադրված չէ «Ֆետա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և պահանջներին համապատասխան, որակել որպես անբարեխիղճ մրցակցություն, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն:

5. Սույն որոշման 4-րդ կետում արձանագրված խախտման համար «Բրենդիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 432 000 (չորս հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

6. «Բրենդիդեր» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնարարել.

1) մեկամսյա ժամկետում շտկել սույն որոշման 4-րդ կետում արձանագրված խախտումը՝ դադարեցնել ««ՓԵՏԱԿԱ» հալած պանիր» անվանումով և «Ֆետա» ծագման տեղանվան հետ ասոցացվող փաթեթավորմամբ ապրանքի իրացումը.

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված հանձնարարությունը կատարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցներ:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը հասցեատիրոջը հանձնելուն հաջորդող օրվանից:

8. Սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով տրված հանձնարարությունները դրանցում սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա են հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

9. Սույն որոշման 5-րդ կետը դրանով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

10. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

11. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ
2024 թ. ապրիլի 22
Երևան



Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

